ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 54. ՌԵՖՈՐՄԱՑԻԱ

1

Կաթոլիկ եկեղեցու ինդուլգենցիաների վաճառքի անբարո գործունեության դեմ XIV դ. հանդես եկավ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր ***Ջոն Վիկլիֆը:*** Նա պնդում էր, որ Հռոմի Պապերը իրավունք չունեն խառնվելու Անգլիական թագավորության և եկեղեցու գործերին: Եկեղեցին Անգլիայում, ըստ Վիկլիֆի, պետք է ղեկավարի ոչ թե Հռոմի Պապը, այլ թագավորը: Նրա նախաձեռնությամբ Աստվածաշունչը թարգմանվեց անգլերեն: 1381 թ. Վիկլիֆի ուսմունքը հռչակվեց իբրև «ազգային հերետիկոսություն», քանի որ այն փորձում էր ստեղծել ազգային եկեղեցի: Ի վերջո կաթոլիկ եկեղեցին հասավ նրան, որ գերեզմանից հանեցին Վիկլիֆի ոսկորները և խարույկի վրա այրեցին որպես հերետիկոսի:

Պրահայի համալսարանի պրոֆեսոր ***Յան Հուսը*** նույնպես հանդես եկավ Պապերի աշխարհիկ իշխանության և եկեղեցու հարստացման դեմ: Նա Աստվածաշունչը թարգմանեց չեխերեն, պահանջում էր եկեղեցին բարեփոխել և ժամասացությունը չեխերեն վարել: Բանավեճի համար Հուսին հրավիրեցին եկեղեցական ժողովի, որտեղ նրան դատապարտեցին որպես հերետիկոսի և 1415 թ. ողջակիզեցին խարույկի վրա:

2

Պապը իր հրովարտակով Լյութերին անվանեց հերետիկոս և բանադրանքի ենթարկեց: Սակայն Պապի հրովարտակը Գերմանիայում հրաժարվեցին տպագրելուց, իսկ Պապի դեսպաններին ամենուր դիմավորում էին ծաղրով ու սպառնալիքներով: Ստանալով հասարակության գրեթե բոլոր խավերի պաշտպանությունը՝ Լյութերը հայտարարեց, որ մեղքերի թողության, հոգևոր փրկության և դրախտային կյանքի կարելի է արժանանալ և առանց եկեղեցու միջնորդության, իսկ եկեղեցին կարող է գոյություն ունենալ և առանց Հռոմի Պապի: Իր ուսանողների ներկայությամբ Լյութերը այրեց պապական հրովարտակը:

Պապի պահանջով կայսր Կառլ V–ը Լյութերին կանչեց պատասխան տալու դասային ժողովի՝ ռայխստագի առաջ: Լյութերից պահանջեցին հրաժարվել իր պնդումներից, բայց նա հայտարարեց, որ հավատի միակ աղբյուրը Աստվածաշունչն է, ինդուլգենցիաների մասին այնտեղ ոչինչ չի ասվում, ուրեմն դրանք օրինական չեն: Կայսրը կարգադրեց ձեր–բակալել Լյութերին, սակայն նրան պաշտպան կանգնեցին ասպետները, իսկ իշխաններից մեկը Լյութերին թաքցրեց իր դղյակում:

3

Երբ Հռոմի Պապը Անգլիայի Հենրիխ VIII թագավորին թույլ չտվեց ամուսնալուծվել իր առաջին կնոջից, արքան ինքն իրեն հայտարարեց Անգլիայի եկեղեցու գերագույն ղեկավարը և իր իսկ հրովարտակով ամուսնալուծվեց: Հետագայում Հենրիխ VIII–ը, որպես Անգլիայի եկեղեցու ղեկավար, իր իսկ հրովարտակներով 4 անգամ ամուսնալուծվեց և նորից ամուսնացավ:

4

Կալվինը հավատի միակ աղբյուր համարում էր Աստվածաշունչը, մերժում էր Հռոմի Պապի և կաթոլիկ եկեղեցու անհրաժեշտությունը, իսկ վանականներին և քահանաներին համարում էր աշխատավոր մարդկանց հաշվին ապրող ձրիակերներ: Հավատացյալներին պետք չէ ճոխ, թանկարժեք ծեսերով եկեղեցի, այլ պարզ հասարակ աղոթատուն: Նրանք պետք է հագնվեն հասարակ, ապրեն բարե–պաշտ, չափավոր կյանքով, հեռու մնան մոլախաղերից, պարերից և զվարճություններից: Ըստ Կալվինի՝ ովքեր հավատում են Աստծուն և ջանասիրաբար աշխատելով կարողանում են հարստանալ՝ Աստծո ընտրյալներն են, նրանց ճանապարհը դեպի դրախտ ապահովված է:

5

Բողոքականության դեմ պայքարում կաթոլիկ եկեղեցին կանգ չէր առնում անգամ մարդկանց մասսայական ոչնչացման առաջ: Ֆրանսիայում կաթոլիկները բողոքականների մասսայական կոտորած կազմակերպեցին, որը հայտնի է ***«Բարդուղիմեոսյան գիշեր»*** անվանումով:

1572 թ. օգոստոսյան մի գիշեր՝ սուրբ Բարդուղիմեոսի օրվա նախ–օրեին, Փարիզի եկեղեցիներից մեկի զանգակատնից հնչած զանգով կաթոլիկները հարձակվեցին և սկսեցին կոտորել բողոքականներին: Նրանց սպանում էին անկողիններում, տների պատուհաններից դուրս նետելով՝ չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին: Կոտորածներ տեղի ունեցան Ֆրանսիայի այլ քաղաքներում ևս: Երկու շաբաթում

կոտորվեց ավելի քան 30000 մարդ: Հռոմի Պապը ոչ միայն հավանություն տվեց այդ սպանություններին, այլև, ի հիշատակ դրա, հրամայեց հուշամեդալ հատել:

6

«Ձիզվիտ» անվանումը ծագում է Հիսուս անվան լատիներեն ***«Ձեզուս»*** արտասանությունից: Ձիզվիտների օրդենում սահմանված էր խիստ կարգապահություն: Կրտսեր անդամները պարտավոր էին առանց առարկության կատարել ավագների հրամաններն ու հրահանգները: Ի տարբերություն այլ միաբանների, ձիզվիտները աշխարհիկ հագուստ էին կրում ու իրենց պահում այնպես, որ չմատնեն իրենց պատկանելությունը օրդենին:

Ձիզվիտներն աշխատում էին նվաճել թագավորների, վարչապետների, նախարարների ու մեծահարուստների վստահությունը, նրանց միջոցով հետապնդել բողոքականներին, վերականգնել կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը: Եթե որևէ իշխանավոր դեմ էր կանգնում նրանց նպատակին, ձիզվիտները գործի էին դնում դաշույնն ու թույնը:

Խաբեությամբ ու խարդախությամբ, սպառնալիքներով ու սպանություններով օրդենը մեծ հարստություն կուտակեց: Միաբանությունը Հարավային Ամերիկայում տիրում էր հողերի, ձեռնարկությունների, նավերի և նույնիսկ գաղութների: Միևնույն ժամանակ ձիզվիտները հիմնում էին անվճար դպրոցներ և քոլեջներ կրոնական կրթության մակարդակը բարձրացնելու համար: Եկեղեցու ծիսակարգը ավելի գրավիչ և հրապուրիչ դարձնելու համար գեղեցիկ եկեղեցիներ էին կառուցում, խրախուսում էին եկեղեցական երաժշտությունը և երգեցողությունը: